ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 276

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 08-001 և 08-001-117-008-002 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.108381 հա և 0.1810 հա մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր | 08-001 և 08-001-117-008-002 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.108381 հա և 0.1810 հա մակերեսներով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները, ինչպես նաև ապահովել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների կարծիքները (կցվում են):

3. Գյումրի քաղաքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ա. Ղուլարյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ. Դավթյան |

Երևան, «15» «սեպտեմբերի» 2021 թ.